ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» փետրվար 2024թ.

ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Խ. Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի պարտականությունները կատարող Արևիկ Ստամբոլցյանի (այսուհետ Կողմ 1 կամ Թանգարան), ով գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի Տարածաշրջանային հ. 1 Պետական Քոլեջ» ՊՈԱԿ-ի, դեմս տնօրեն՝ Պարույր Սանթրոսյանի (այսուհետ Կողմ 2 կամ Քոլեջ), ով գործում է Քոլեջի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմերը պատրաստակամ են միմյանց ցուցաբերել մշակութային, գիտակրթական, աջակցություն.

2.1.1 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող, կրթամշակութային բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացման,

2.1.2 Կրթական-մշակութային սեմինարների, խորհրդակցությունների, դասախոսությունների կազմակերպման,

2.1.3 Կրթամշակութային, մասնագիտական գրականության, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման,

2.1.4 Խաչատուր Աբովյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող կրթամշակութային ծրագրերին ներգրավվման,

2.1.5 Քոլեջի սովորողների պրակտիկայի կազմակերպման,

2.1.6 Քոլեջում սովորողների արտոնյալ պայմաններով թանգարան այցելությունների ապահովման,

2.1.7 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման,

2.1.8 Սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների և այլ միջոցների օգտագործման,

2.1.9 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու,

2.1.10 Փոխանակման ծրագրերի, մասնավորապես Քոլեջում սովորողների մասնակցության ապահովում թանգարանում գործող միջոցառումներին, կրթական ծրագրերին,

2.1.11 Համատեղ ցուցադրությունների, միջոցառումների, շնորհանդեսների կազմակերպման,

2.1.12 Հոբելյանական իրադարձությունների համաժամանակյա միջոցառումների, ծրագրերի կազմակերպման,

2.1.13 Յուրաքանչյուր տարեսկզբին ընթացիկ տարվա ծրագրերի համատեղ առցանց քննարկման և հաստատման:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է մինչև 5 տարի ժամկետով:

5.2 Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

8.2 Սույն հուշագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.3 Սույն հուշագիրը կնքված է հայերենով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմ 1	Կողմ 2
«Խ. Աբովյանի տուն-թանգարան» **ՊՈԱԿ**	«Երևանի Տարածաշրջանային հ. **1 Պետական Քոլեջ»** ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ 2-րդ փ., տուն 4	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի, 3/1 շենք
հեռ.՝ +374 10-28-46-86	հեռ.՝ + 374 10-28-56-12

էլ. հասցե՝ abovyanmuseum@gmail.com

Տնօրենի պ/կ՝ Արևիկ Ստամբոլցան

Ստորագրության Կ.Տ.

էլ. հասցե՝ yerevancollege@gmail.com

Տնօրեն՝ Պարույր Սանթրոսյան

Ստորագրության Կ.Տ.